# ՄԷՃՄՈՒԱՅԸ ԱԽՊԱՐ

Սէնէլիք բէտէլի . . . . . . . . 120
Ալթը այլըղը . . . . . . . . 60
Սէնէլիք բօսթա իւճրէթի . . . . 30
Նիւսխէսի բօսթասը . . . . . . 80

Տէրճ խուլունմէք իչին այրը-ճա բազարլըղ օլունուր։
Ղազէթայա միւթէալլիգ խուսուսաթ իչին Յ. ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճաաթ օլունա

Ի

## ՆԱԽԱՎԿԱՅՆ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

ԱՂՕԹԷԻՐ Ի ՎԵՐԱՅ ՔՈ ՔԱՐԱՑՕՂԱՑՆ

ՇԱՐԱԿԱՆ

## ԱՌ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ

Ամբաստանեալ ըՍտեփանոս քարշի յատեան.
Անպարտելի Նախամարտիկ ճշմարտութեան.
Նախանձոտք ժանտք, չարախօսեն, ժայթքեն լուտանս.
Դիզեն, բարդեն, կուտեն վրան բիւր մեղադրանս...

Զնազովրեցին խոստովանի.. Դատաւորէն՝
Աւադանւոյն և երիցանց դաս անօրէն
Խընդրէ զիւր մահ... Աննա կըտրէ՝ զվըճիռ մահուան..
Այսահարեալ և կատաղի վազէ խուժան...

Կարկըտի պէս խիտ խիտ վըրան թափեն քարեր,
Հընչեցընեն զօդ չառաչմամբ անըզգամներ,
Զարակոչկոծ ընդահատակն՝ անդըրդուելի
Կը մեռցընեն... երկիր վարդոյն արեամբ ներկի...

Որոց ի սիրտ ճշմարտութեան, սուրբ կըրօնին
Բորբոքի սէր, որք մարդկութեան, իւրեանց ազգին
Վառին գըթով, հալածանաց ենՆըշաւակ..
Միշտ կեղծաւոր փարիսեցւոց զոհ, պատարագ...

Ճըշմարտութեան Նախավըկայ դու պանծալի,
Զփառացն՝ արեամբդ առիր զպըսակն անխամրելի.
Զարչարակից մահացուդ՝ Մեծ Գալիլեացւոյն,
Վասն ըսպանչացդ աղօթէիր Աստուածորդւոյն...

Լուսանորոգդ ո՛վ Քրիստոսի դու մարտիրոս,
Ուխտաւորացդ համար եղիր միշտ բարեխօս..
Անուանակցիդ վասն՝ ընդ աջմէ Հօր Նըստողին
Աղաչէ միշտ... կեցցէ՛ յամայր Հայր մեր գըրոհին...

* * *

## ԱՐՁԱԳԱՆԳ

ԲԱՂՁՐԱՆՈՒՆՔ ՄՐՏԻ ՑՕՆԵԱԼ

## ԱՄԵՆ. ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ

## ՄԵՐՈՅ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ Ժ. ԵՐՈՐԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

## ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԵՒ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

Ի ՏԱՐԵԴԱՐՁԻ ԵՆՈՐՀԱԶԱՐԴ ԱՆՈՒԱՆ

Ի տօթակէզ տապոյ շնչոյդ, երկնից թախծեալ 'ի դիմաց,
Դէզք բըքայոյզք ամպոց մըթին, մինչ լուծանին սառնամած.
Վարդապըսակն 'ի կապուտակ լայնածաւալ հայելւոյ,
Անմահական և մինչ փայլի քոյ սուրբ պատկեր ջինջ 'ի ծոց.

Կենդանարար լուսոյդ ծագման անդ 'ի յերկիր չե՛շտ 'ի վայր,
Զարթնու համայն 'ի խոր քընոյն, 'ի շող լուսոյդ ազդարար.
Գեղանըկար սուրբ Պատկերիդ, աչք 'ի յակճիռ համայնից,
Ստեփանոս... մեր Հայր հարանց... գոչե՛ն ի ձայն... հրճուալից.

Սեւափետուր գունդք բոցաշունչ, ի ձայն ահեղ բարձրագոչ,
Դըժոխային ժայթքեն արտաքս, հըրածորան յանդնդոց.
Եւ 'ի դիպել անմահ լուսոյդ, պայթիւն 'ի մեծ ահաւոր,
Տարտարոսին գահավիժին անծակուռ անդ ի խոր.

Գաղանադէմ դահիճք անգութք, անյագ արեան ծծնամիք,
Դուք' որ 'ի խիստ քարանցդ հարուած, նորին ըլկման դեռ ծըտիք.
Տեսէ՛ք 'ի կառս հեծեալ ամպոց, երկնից անլեր 'ի կըկէս,
Նա՝ յաղթական փայլի Սըբոց, անդ մըցանաց 'ի Հանդէս.

Քարինքդ անթիւ որ ներկեցին ըզՔոյդ մարմին ծիրանի,
Ընդ աստեղաց փայլին՝ փոխան անդ 'ի կամար մի առ մի.
Վարուցդ արդար ճշգրիտ նըկար կշռոյն ձեւին անդ պատկեր,
Զուգել ըզմեր ռահ ընդ շաւղաց, սուրբ կենցաղոյդ վշտամբեր.

Արիւնազանգ և սայրասուր տե՛ս արդ քարամբդ անհամար,
Մինչ ձաղկէին ըզսուրբ մարմինդ, ո՛հ ի հարուած չարաչար.
Հըրաշագործ Փրկչին անմահ ըզՓայտ կենաց սուրբ Խաչին,
Զարմանահրաշ զարդարեցեր քաջ ոսկերիչդ Անմահին.

Ձիւնախաղաղ լերինք բարձունք, ներկեալ արեանդ 'ի շըղարշ,
Գողգոթային գըծեն աչաց, ո՛հ ըզպատկեր աղէխարշ.
Բազմաչարչար ո՛չ ինչ նըւաղ, վարուցդ 'ի ռահքան Փրկչին,
Համայօժար նահատակեալ եղեր Վըկայդ դու Նախկին.

Սիրամարգին 'ի տիպ տառան, պարզեալ Աջոյդ ծիածան,
'Ի սուրբ Տօնիդ ցարդ բարեխօս մեր դու միայն Հայր Պաշտպան.
«Ով Աստուած իմ, գոչե՛ս 'ի ձայն, թո՛ղ ըզյանձանս մարդ կորէն,»
«Եթէ կամօք կամ յակամայս և թէ յանդէտս ինչ գործեն.»

Տեղան երկինք՝ յորդ անձրեւաց, սրբոյ արեանդ ըզտարափ.
Փայլատակեալ ըզհուր սիրոյդ, 'ի խոր սրտից որոտմամբ.
Նոր Եօրդանան արիւնահեղ, եռայ 'ի տես ձեր աչայ,
'Ի ժահահոտ սրբել խկոյն ոգեկործան 'ի մեղաց.

Շարժեա՛ ո՛ Հայր անզօր լեզուիս, ժանդեալ ըզլար քընարայ,
Անուանակցիդ և Հօր մերում, հիւսել ինձ երգ դըրուատեաց.
Շնչեա՛ զոգիդ լընուլ մըտացս, ո՛հ իմաստից զառադատ,
Վարել ըզնաւ մեծ ներբողեան. խուռն հանճարոյս 'ի ծովակ.

Եւ ես ըզսուր գըչիս կըտուց, յարիւն քոյ սուրբ 'ի թաթախ,
Ոգենորոգ ըսկըսեցից ըզՔոյդ Անուն երգել նախ.
Թուչնոյն 'ի սոյլ քաղցրանըւագ, յայդուց անոյշ դայլայլիկ,
Ընդ բիւր աւուրս այսպէս ուրախ, հովուել 'ի՝ Եօթւպ երջանիկ.

'Ի Նըրաբոյս 'ի գեղ ծաղկանց, տնկեալք 'ի սիրտ ծաղկոցիդ,
Տե՛ս 'ի միում մեք 'ի տարւոջ, բարգաւաճեալք քոյդ 'ի գիրկ.
'Ի մեծաշուք Տօնիդ Անուան, սուրբ մաղթանաց 'ի Հանդէս,
Ծաղկանըկար պճնեմք խնկոց, ըզՔոյդ մարմին 'ի պարտէզ.

Մեք 'ի մեղուաց բանականաց, աշխոյժ պարուց ճիշդ նըկար,
Գունակ ծաղկանցդ 'ի ծոց փափկիկ, խառն ի՛ բզզիւն 'ի դաղար.
Վարուցդ համեստ քաղեալ ըզհիւթ, ազնուութեան կենցաղոյդ,
Ըզմեղր անոյշ այսօր 'ի ձօն, նուիրեմք քըմաց քոյ փափուկ.

Դու՝ մոլորակ արտակեդրոն, երկրագնտոյս շուրջ բոլոր,
Շրջան առեալ փայլեսդ 'ի լոյս, ամ ըստ ամէ նորանոր.
Զի՛ք քեզ դիտակ, և ո՛չ կարկին, ո՛հ 'ի չափել քոյ քայլից,
Երագաթռիչ սուր հանճարոյդ ըզմեծութեան տրամագիծ.

Ի Վոսփորեան ծովեզերեայ, յայն սուրբ Տաճար զարդարուն,
Նա՝ մին 'ի մեծ Եռիշատակացդ, որ անդ 'ի փայլ 'ի կանգուն.
Զայնք նըւագաց խառն ընդ քաղցրիկ շընորհաւոր մաղթանաց,
'Ի սուրբ Տօնիդ ահա՛ այսօր, լըսին 'ի մեծ Տաճարդ.

Իսկ՝ աստանօր մա՛րթ ինչ իցէ, 'ի մոռացօնս լեզուահատ,
Անմահական երբէք ըզքոյդ, ո՛հ անցանել յիշատակ.
Զարմանահրաշ յայն տեսարան, անդ 'ի յակճիռ կալ աչաց,
Մինչ համայնից չարժէ զոգի՛ պաշտել ըզքեզ Հայր գըթած.

'Ի Նորակերտ յայն Վարժարա՛ն, Հայասերուն կուսանաց,
'Ի հիմն անխախտ կանգնեալ Արդեանց 'ի Յոյց յաւէրժ քոց բարեաց.
Լո՛ր Հայր Վեհիդ՝ և անդ այսօր լիաբերան մաղթանօք,
Տօնեն զԱնուանդ ըզՅիշատակ, 'ի չարս ամաց՝ կեալ բազմօք.

Դիմեցէ՛ք արդ երախտապարտ, ո՛ սիրասուն օրիորդք,
Հայրախընամ և որբասէր Վեհապետիդ ընդ բազկօք.
Սըրտանըւէր ջերմ աղօթիցդ, Նորապըսակ յայն մատրան,
Զօնել Նախկին ձեր՝ յիշատակ, յաւուր Տօնի սուրբ Անուան.

Եւ դուք հապա, Տեարք մեծաշուք, Զարդք Ազգային Հանդիսիս,
Որբ կուսանաց անմեղ շըթանց, օ՛ն ձայնակից դուք ընդ իս.
Բարձրաշընորհ վեհ Արքային, ընդ գեղ Մահկաւ Մեծապանծ,
Մաղթել ուրախ զայս մեծ Վասակ, Հօր վեհազնոյս անմռաց.

Օրհնէ ըզմեզ, աստ 'ի նըկար Հանդիսադիր Պատկերին,
Շնորհեալ Վեհիդ յանմահ պատիւ, Քրիստոսախումբ քոյդ Հօտին.
Արեւմտեան գերահռչակ վեհ Հայրապետ Եռանդա,
Ընդ յամայր՝ ամս 'ի մեծ խնճոյս, Տօնել զԱնուանդ Եռիշատակ.

Արդ Հանդիսիդ ես ըզՊատկեր, տե՛ս ըսքօղեմ հըճուալից,
Ընդ ոսկեթել զըւարթ արփւոյն երեկորեան նըշուլից.
Արծաթափայլ և աստղազարդ, անդ 'ի վերին Պալատան,
Զայնք խնդութեանց յարատեւեն, 'ի նոր արփւոյն մին ծագման.

ԳԷՈՐԳ ՍԱՄՍՈՆՃԵԱՆ

